


Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
Բաժանորդագրին ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ



ՇԱՒԱԹԱԹԵՐԹ

To the DICKRIS PUBLISHING COMPANY
301 East 34th St., New York City

Entered at the Post Office at New York as
Second Class Mail Matter.

Խմբագրութեան ղրկուած ծրար
կամ նամակ ետ չեն զրկուիր:

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՐ ԱՉԳԱՅԻՆ ՀԻՒՍՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շարունակութիւն տես թիւ 88)

Ինքնակաւանութիւնը, արհամարհանութիւնը, բռնութեան համակերպումը, նախանձը, իրար վնասելը և անմիտութիւնը նաև մեզի ազգային հիւանդութիւնն են:

Մենք անպայման կերպով կը հաւնինք ինքզինքնուս. մեր բան ըրածին, խորհածին ու խօսածին վրայ կը հիւանդը. և նոյն ատեն արհամարհանք մը ունինք, դէպի ուրիշը անողոք կերպով կը հեգնենք այլոց ամեն ըրածները, խորհածները և խօսածները:

Բժիշկները կը հաւաստեն թէ թոքախտի մէջ տարօրինակ յատկութիւնն այն է որ՝ արտաքին, ինչ ալ ընես, երբէք չհաւատար թէ ինքը թոքախտէ բռնուած է, նա միշտ կը խորհի թէ երբէք ծանր բան մը չունի: Այո, կը հազայ, արիւն կը փսխէ, ամեն օր կը մաշի, շնչարգելութիւն կուենեայ, բայց ատոնք բան մը չեն թոքերը քիչ մը բորբոքեր են, կանցնին: Կարծիքով բան մը չկայ: Նա միշտ չի վերջին շնչունը կը կարծէ որ պիտի ապրի, պիտի առողջանայ:

Այսպէս են նաև բարոյական հիւանդութիւնները: Մարդ ո՛րքան բարոյապէս յիշուի՝ ինքզինքը այնքան բարձր կը կարծէ: Իր կենցաղը, իր վարմունքը, իր ընթացքը ո՛րքան վրնասարեր, ո՛րքան կոպիտ և ո՛րքան ստորին ըլլան, զանոնք այնքան շահաւէտ, այնքան ազնիւ ու այնքան գովելի կը համարի: Ի՛նչ է եղբոր իրեն, շատ աղէկ է, ամենէն գործը գիտցող, ամենէն ազնիւ և ամենէն պատուաւանաւ մարդն է:

Նոյն ցաւալի երևոյթն է որ կը տեսնուի մեր ազգային յատկութեան մէջ: Մենք մեր անձին մէջ երբէք տարօրինակ բան մը չենք տեսներ, չենք ընդունիր թէ կրնանք սրտալի միշտ լաւ կղզանք, ուղիղ կը տեսնենք, շիտակ կը խորհինք, արդարութիւնով կը վարուինք, մեր «ես»ը ամենտեղ բանիմացը և ամենէն բարձրըն է: Իսկ զիմացինը, ուրիշը՝ անոնք խելք չունին, գործերնին չեն գիտեր, կամ թէ խարդախ են, խաչագող են: Ահա ասոր համար է որ մեր մէջ «ես»ին ու «դու»ին անդուլ կուրը կայ: Հրապարակային ժողով և խռովութիւն հովանի զարմեր են մեր մէջ:

Այս ազգային հիւանդութիւնները երբէք ժառանգած չենք մեր ազատ նախնիքերէն. ընդհակառակը անոնց բարոյական կենսութեան անմահ և առողջ ձիւմբերուն մեր արիւնին մէջ ապրելովն է՝ որ մեր պատմական ահաբեկ յեղաշրջումներէն զարբեր ընթանալով՝ կարող եղած ենք պահել մեր ազգային գոյութիւնը, մեր ազգային նկարագիրը, մեր աւանդութիւնները, մեր լեզուն և եկեղեցին:

Երբոր աշխարհակալներու արհաւանքները սկսեցին Հայաստան աշխարհին վրայ՝ և երբ անոնց գործած սոսկալի նախնիքները կորեցին մեր ազգային անկախութեան ծղոնը ու մենք տարածուեցանք գետնամած, ահա այն ատեն արտաքին խորհակը սկսեց հիւանդութիւն ներմուծել մեր արիւնին՝ մինչև մեր ոսկորներուն ծուծը:

Երբ տապալեցաւ մեր իշխանութեան կազմը, անիշխանութեան ըստուերները տարածուեցան մեր հոգիներուն վրայ. ա՛լ սկսեցինք անարգել ամեն բարեխղի իշխանութիւն և սորվեցանք գլուխ ծռել բիրտ ուժին ու բռնակալութեան. երբ մեր ազգային պատիւը մեր արիւնի և արցունքի հեղեղներուն հետ աղբերուն խառնուեցաւ, սկսեցինք արհամարհել ամեն ազգային պատիւը՝ որքան ա՛ նուիրական ըլլար այն. երբ որ արիւնդ տիրողները մեր ազգային արժանապատուութիւնը ոտնակոխ ըլրին, սկսեցինք ամեն հայու արժանիքը մեր խորտակուած անձերուն սողոսկումներուն հետ գետնաքար թանիլ. երբ տգիտութեան մահաշուշ շուշուր մեր կողերին գիտակցութիւնը չորացաւ և նա մեր վրայ տարածեց նախապաշարուններու կաշկանդումները, աշքերնիս քիչ մը բացուելուն պէս՝ թքնել սկսեցինք կեդրակախութեան ալ, կրօնքին ալ. երբ հայ ազատը, հայ իշխանը կապուեցաւ ստրկութեան լուծին, սկսեցինք լուտանք տեղալ ամեն ազգեցութեան և ամեն պատկառանքի, եթէ ազգային մը վրայ էր որ կը փայլէին, երբ որ անիւրտ ու չար տիրողին առջև ընկելը, շողոքորթելը, և հաճոյակատարութիւնը ինքնապաշտպանութեան և ապրելու միակ միջոցները եղան, երբ որ ուրիշը չարախօսելը, ուրիշը զրպարտելը մեր ակնկալած շահը ձեռք բերելու հընարագիտութեան տեղ անցան, ահա այն ատենէն փոքրուեցան իշխանը, նախանձը, ուրիշին չարիւրը և այլոց վրնասին մէջ մեր շահը փնտռելը, արտաքին պէս մուտ գտան մեր բարքին մէջ ու մեզի երկորդ ընդթ գարձան. երբ որ բռնաւորին սուրը կը տրտեց մեր ազգային կազմակերպութեան շիղերն՝ սկսեցինք ինքզինքնին անջատ անջատ զգալ, մեր ազգային անդամակցութեան գիտակցութիւնը վերջացաւ, մեր անհատական շահը, անհատին ապահովութիւնը և պատիւը՝ ընդհանուրին, ազգին, շահին, ապահովութեանը և պատուոյն մէջ զգալու գիտակցութիւննիս կորուսինք, և եղանք անմիաբան կը նախանձիք իրարու և ամենքս կը մատնուինք աննախանձելի վիճակի: Կ'անարգենք զիրար և ընդհանուրը անպատուութեան տիրութիւն մէջ կը խորտակուինք, կը վնասենք իրարու և բոլորս ալ ահաբեկ վնասներէ աշք չենք կրնար բանալ, դրսէն թշնամիներով պաշարուած՝ ներսէն զիրար կուտենք:

Մեր գլխուն տեղացած ծանր ու անհամար հարուածներն ալ մեր մըտքին մէջ խորհելու և դատելու արտապարզ կարողութիւններ արթնցուցեր են:

Մենք կուրորէն հետեւելու շատ տրամադիր չենք, մենք կը մտածենք, մենք կը դատենք:

Տգիտութեան խաւարին մէջ, ստեղծել, ինքնավստահութիւնը և ինքնամտածումը չարիք կը ծնին, անոնցմէ է որ և կ'աճեն և կուգան մեր ինքնակաւանութիւնը, արհամարհանութիւնը, ևսամոլութիւնը գոռոտութիւնը, ևն. ևն. ամէնքն ալ խաւարի միացումէն ծնած հրէշներ:

Ընդհակառակն ինքնավստահութիւնը ու ինքնամտածութիւնը՝ եթէ զբառութեան և դաստիարակութեան լուսովը ողողուին, անոնցմէ պիտի սերին վեհանձնութիւն, անվեհանձնութիւն, երկաթեայ կամք, արժանիք գնահատելու գիտակցութիւն և ուրիշին գաղափարները, ուրիշին անձը և ուրիշին իրաւունքը յարգելու իմաստութիւն:

Մենք իբրև ազգ պատուական նիւթ ենք. եթէ վարպետ ձեռքեր մեր վրայ աշխատին և եթէ ջանանք ինքզինքնիս դաստիարակել. նոյն իսկ մեր կրած ցաւերը և աղէտները պիտի ծառայեն մեր գեղեցկութիւնը աւելցունելու, մեզ վստահութեանը, եթէ զիտութեան, բարոյագիտութեան և գիտակցութեան լոյսը ողողէ մեզ շարունակ:

Ամերիկայի մէջ շատ մը հայերու իրար միտակցութեանը մասին ուրիշ առթիւ կը գրենք:

Շոգիին ուժը յառաջ բերողը ճնշումն է, մեր կրած ազգային դարձուր ճնշումներն ալ մեզմէ ինքնօգնութեան գիտակցութիւնը արտաքինը են ու այդ գիտակցութեանն ուժի անհուն ամբարով մը ծներ է ինքնավստահութիւնը:

Մենք ինքնավստահ ենք. յստուան ենք, յանդուգն ենք:

Մեր գլխուն տեղացած ծանր ու անհամար հարուածներն ալ մեր մըտքին մէջ խորհելու և դատելու արտապարզ կարողութիւններ արթնցուցեր են:

Մենք կուրորէն հետեւելու շատ տրամադիր չենք, մենք կը մտածենք, մենք կը դատենք:

Տգիտութեան խաւարին մէջ, ստեղծել, ինքնավստահութիւնը և ինքնամտածումը չարիք կը ծնին, անոնցմէ է որ և կ'աճեն և կուգան մեր ինքնակաւանութիւնը, արհամարհանութիւնը, ևսամոլութիւնը գոռոտութիւնը, ևն. ևն. ամէնքն ալ խաւարի միացումէն ծնած հրէշներ:

Ընդհակառակն ինքնավստահութիւնը ու ինքնամտածութիւնը՝ եթէ զբառութեան և դաստիարակութեան լուսովը ողողուին, անոնցմէ պիտի սերին վեհանձնութիւն, անվեհանձնութիւն, երկաթեայ կամք, արժանիք գնահատելու գիտակցութիւն և ուրիշին գաղափարները, ուրիշին անձը և ուրիշին իրաւունքը յարգելու իմաստութիւն:

Մենք իբրև ազգ պատուական նիւթ ենք. եթէ վարպետ ձեռքեր մեր վրայ աշխատին և եթէ ջանանք ինքզինքնիս դաստիարակել. նոյն իսկ մեր կրած ցաւերը և աղէտները պիտի ծառայեն մեր գեղեցկութիւնը աւելցունելու, մեզ վստահութեանը, եթէ զիտութեան, բարոյագիտութեան և գիտակցութեան լոյսը ողողէ մեզ շարունակ:

Ամերիկայի մէջ շատ մը հայերու իրար միտակցութեանը մասին ուրիշ առթիւ կը գրենք:

ՕՐՄԱՆԱՆԻ ԱՆՈՒՆԸ ՉԵՐՇԱՍԱԿՈՒՐ

Ժողովողականութիւնը ժողովուրդին արդար ու բանաւոր զգացումները յարգելէն յառաջ կուգայ:

Ուրախութեամբ կը տեսնենք թէ մեր Գեր. Առաջնորդը ժողովողական կըլլայ:

Արտասահմանի հայերը կուգին եւ իրաւունք ունէին այժմու անհայրենասէր պատրիարքին ապտակ մը տալ. քէթ իր անունը պատարագի մէջ չըլլատակելով: Մեր առաջնորդը ժողովողին այս արդար իրաւունքին գոհացում տուաւ:

Երբ մեր կղերական դասակարգը, այսպէս իր մէջ գտնուող անարժան պաշտօնեաներուն մեղքը իրենց երեսին գարնէ, այն ատեն ժողովուրդն ալ իր ատելութիւնը ընդհանուրի վրայ թափելու փորձութեանէն կազատի:

ԳՐԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ՍԽԱԼ ՄԸ

Վերջերս մեր նորավարժ գրաչարներուն պատճառաւ թերթին մէջ գրաչարական շատ մը սխալներ սպրդեցան, սակայն շատ աւելի կը ցաւինք որ վանի սովորաց հաշիւին մէջ ալ անոր ունեցան՝ որուն համար մեր Գեր. Առաջնորդը շօր և ընթերցողաց ներողութիւնը կը խնդրենք:

Մեր միտակ և շատ զբաղած ըլլալուն պատճառաւ սրբագրութեանց հարկ եղածին չափ չկրցինք նայիլ:

Անցեալ թիւին հաշուեցուցակին մէջ պէտք ուղղուին. — Պրայթնէն 6 ի տեղ 6.40, Մօլթընէն 9.25 ի տեղ 6.25, նաև Տիգրիսի թիւերէն վաճառումին 203.76էն ետքը 195.56 մը և հանգանակութեան 1703.66ը կըրկնուած են:

Ասոնք ուղղելով ընդհանուր համադրումարը կըլլայ 2109.58:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐԲԻ

Ի նպաստ վանայ սովորաց

Վեհալիւ բարեխնամ Առաջնորդ Գեր. Սարաճեան Սրբազան Հօր նախագահութեամբ Յուլիոն 22 շարաթ երկկոյ գուժարեալ ընդհ. ժողովոյ մէջ բացուած հանգանակութեան արդիւնքը մօտ 400 տօլարի հասած լինելով կը շարունակուի: Սրբազան Հօր հրամանաւ սոյն հանգանակութեան արդիւնքը մաս առ մաս պիտի հրատարակուի ի լրագիրս թէ՛ մասնակցողներուն ի միամտութիւն և թէ՛ այլոց ի քաջակրթութիւն:

Թեմակալ Հովիւ Նիւեօրքի ԽԱՒ. ՎԱՐԴԱՊԵՏ

Գոհմանակալ Տիրա կըլլայէնիւնի վճարուած են ցարք—

ՅՈՒՑԱԿ Ա

- Խաղ վարդապետ, 10 տարի. Կ. Կիւլայէնիկան, 100 տ. Մ. Գարակոզեան 50 տ. Յ. Հիւրմիւզ, Բէլէկեան, Պ. Գաղանձեան, 25 տարի. Ս. Վարժապետեան, 15 տ. Յ. Գասապեան, 10 տ. Յ. Գամպէր, 7 տ. Մ. Ասատուրեան, 5 տ. Տօք. Մ. Բարունակեան, 4 տ. Հայրենիքի Խմբագրութիւն, Տօք. Գարիբեջեան, Տիկ. Սիրակեան, Թ. Ս. Կալանձեան, Մ. Միտակեան, Ս. Մահմարեան, 2 տարի. Ա. Ասատուրեան, Ա. Յակոբեան. Գ. Երազեան, Գ. Թէրզեան, Ե. Արսէնեան, Թ. Գարողանեան, Թ. Սարոսեան, Խ. Փափազեան, Կ. Ղումրիկեան, Կ. Զէթեան, Զ. Վարդեան, Մ. Թաշճեան, Մ. Գալուստեան, Յ. Գ., Յ. Ուզունեան, Ե. Մարտիկեան, Ս. Քէօսեան, Ս. Կիւլայեան, Ս. Արմաճեան, Տ. Թօփուլեան, Օ. Հապէշեան, Տօք. իշխանեան: մէյմէկ տարի:

Նիւեօրքի Հայերու հայրենասիրական պարտաճանաչութեան ջերմաշար իր աստիճանը պիտի ցուցնէ վանի սովորաց համար բացուած հանգանակութեան արդիւնքով:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՆԻԿ

Նոր կենսաբան հետազոտությունները կը քաղենք:

ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԸ ԵՒ ՊԱՆԱՏԸ

Կ. Պոլսէն յուլիս 15 թուականով կը հետազոտեն «Մթնանտար»-ը:

«Հայոց պատրիարքը մէկ քանի օր առաջ անձամբ հրատարակեց մատուց պալատը: Ասիկա հետեւեալն էր վերջին զանազան դէպքերուն, ի միջի այլոց ոստիկանութեան նախարարարին առած այն տեղեկագրին թէ Կ. Պոլսոյ մէջ վերջերս պատահած բազմաթիւ շրջաններն ու փոքր փոխարքութիւնները հայ յեղափոխականներուն գործն էին, և թէ անոնց գործունէութիւնը կասեցնելու միակ միջոցն էր իր ատար հազարամուրի Հայ Կ. Պոլսէն դուրս հանել: Փոքր-Ասիոյ քրիստոնէայ ընկերներուն վիճակը, որոնք ունէ պաշտպանութիւն չեն գտնար տեղական իշխանութիւններէն՝ անզական հարցստահարութեանց և Գերատեալ յարձակումներուն դէմ, գանգաւոր ուրիշ նիւթ մը կը կազմէր:

«Պատրիարքին այս գործին առաջին հետեւեալը եղաւ ներքին գործերու նախարարին հրատարակեց ման լուրը. բայց քիչ ետքը լուր ելաւ թէ Սուլթանը իմ թիպով ականակաւ պատուանշանը չնորհած է նոյն նախարարին: Այսու հանդերձ, երէկ իրատէ մը հիւս յայտարարող թէ պատրիարքին գտնադատները լուրջ նկատողութեամբ աշխատեալ են և անոնց գործունէութեան մասին է: Խնդիրը այսպէս առ այժմ վերջացած է:»

Յուլիս 8 թուականով Կ. Պոլսէն կը գրեն մեզ:

«Խառն ժողովը կ'ուզէ յիշատակագիր մը ներկայացնել պալատը, մասնաւոր ընկելով Հայոց անտանկի կացութիւնը, և սպառնալով հրատարակել թէ գարման մը չտարուի այս կացութեան: Իմ կարծիքովս, Սուլթանը բան մը պիտի չընէ:»

Կ. Պոլսէն «Թայմը»-ին կը հետագրեն թէ Սուլթանը հրամայած է ամբողջապէս ջնջել այն բոլոր պարագեքերը զոր Հայոց վանքերը կառավարութեան ունին:

Ա. Ղեկի ՀԱՄԱԺՈՂՈՎՐԸ. Կ. Պոլսէն կը գրեն մեզ յուլիս 10 թուականով:

«Սուլթանը մեծապէս յուզուած է Կ. Պոլսէն Լա Հէյի Համաժողովին ուղղուած բողոքաւորին մասին. (Տես «Նոր Կենսա» յուլիս 15):»

«Կը հետապահեն թէ Արթին փաշա ունէ մասնակցութիւն ունեցած չէ Օրմանեան պատրիարքին Լա Հէյի Համաժողովին ուղղած հետազոտման մէջ: Օրմանեան ինք իր գլխուն, առանց խորհուրդ հարցնելու Արթին փաշային որ երեք օր յետոյ միայն հետազոտման լուրը իմացած է, առանց Սուլթանէն բանագատուելու, և առանց իստանբուլի անդամներուն կարծիքը առնելու, խմբագրած, ստորագրած և զրկած է այդ հետազոտմանը:»

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՋԱՆՍՏՆՈՐ-ՀՈՒՄՆԵՐԸ. Կ. Պոլսէն կը գրեն «Մթնանտար»-ը. Լուր կայ թէ ներքին գործերու նախարարութեան մէջ նոր դիւան մը պիտի հաստատուի, պաշտօն ունենալով արձանագրել քրիստոնէայ հպատակներուն ամուսնութիւնները, ծնունդները և մահերը, և հսկել անոնց ըրած կտակներուն գործադրութեանը: Ասիկա կը նշանակէ ջնջել պատրիարքներուն մինչև հիմա վայելած իշխանութեան մէկ մեծ մասը:

ՔԱՂԱՔԱԿԱՑ

ՁԱՐԸ ԿԸ ՀՐԱՍԺԱՐԻ ԳԱՀԷՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐԷՆ ՄԻՆ Է ԻՐ ԻՆՊՍՍ ՀԱՅՈՑ ՏՈՒՍԿ ԿԷՍ ՄԻԼԻՕՆ ԲՈՒՊ-ԼԻՆ Զ ԳՈՐԾԱԾՈՒԻԼԸ:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՆ

Առջի օրը լուր ելաւ թէ Ձարը մտադիր է ուրիշ գետնանախագի մը հրաւիրելու Պալքանեան և Հայկական խնդիրները կարգադրելու նպատակաւ, և այսօր լուր կուգայ թէ Ձարը կը հրատարակի որովհետեւ իր գահը բարձրանալէն ի վեր նպատակի բազում չարաչար անյաջողութիւններու ենթարկուելէ: Վերջին լուրը իր ներքին ընտելութեամբ հաստատութիւն կուտայ առջի լուրին հիմ ունենալուն:

Լոնտոն թայմզիլ Փարիզի թղթակիցը, պարոն Տէ Պլոլից, կրտէ թէ Ձարին հրատարակու մտադրութիւն ունենալուն լուրը անանկ ազդելու է առած է որ անոր հաւատ ընծայել կըստիպուի, նոյն այդ ազդելու է որ ինք շատ անգամ միջնորդային խիստ կարեւոր լուրեր ստացած է նախնիաց ժամանակներու մէջ:

Ա. Ղ. Տէ Պլոլիցին պատմութիւնը:

«Ներքին երկրորդ շատոնց ծանծարացած է գահէն որուն վրայ նպատակի վրիպումներու գառնագոյն փորձառութիւնները ստացած է:»

Ասոր իբր օրինակ ինք (Ձարը) Հայերուն տառապանքի օրերուն իր անձնական գանձէն կէս միլիոն ռուպլի կուտայ Հայերուն համար, քանիչ մը ետքը երբ քննութիւն կընէ իմանալու թէ այդ գրամը ի՞նչ պէս գործածուած է, կը տեսնէ որ անկէ բէնի մը անգամ արուած չէ Հայերուն, այս բանը իրեն շատ խոր վշտ պատճառեց:

Ասոր նման անթիւ բաներ պատահած են որոնք զինքը իր գահէն զրուցեցուցած են, գահաժողովուրդ մը չունենալու ալ զինքը առաջնորդը է կարգ մը նախապաշարութիւններու:

Նա կը յիշէ Ռուսական աւանդութիւն մը թէ Նիքոլա անուհով և իրեն գահաժողովուրդը Ձարին մը պիտի յաջորդէ Միքայէլ անուն մէկը որ Կ. Պոլսը պիտի գրաւէ: Այս բանը կը վերագրէ իրեն և իր Միքայէլ եղբորը:

Ատիկէ ի վեր ինք մտած է գահը ձգել իր երբօրը սակայն գործադրութիւնը հետաձգած է յուսարով տակաւին թէ ժողովուրդը կրնայ ունենալ իր մեծած եղբորը, որ գահաժողովուրդն էր, հիւանդութիւնն ալ զինքը կարգելէր իր այդ մտադրութիւնը ի գործ ածելէ. նաև Լահէի համաժողովը զինքը կը կապէր, որովհետեւ այդ պարագաներուն իր հրատարակը յոյսերու խորտակում յառաջ պիտի բերէր:

Սակայն Լահէի համաժողովարու մի անյաջող վերջնալը զինքը կրկին կը մղէ հրատարակու մտադրութեանը:»

Այս առթիւ համառօտ ակնարկ մը ձգեց Ձարին և արքունական գերդաստանի յարաբերութիւններու վրայ:

Ներ ներքին երկրորդ Ռուսիոյ գահը պիտի բարձրանար օրաթերթեր և հանդէսներ աշխարհի ամեն կողմէն կը փառաբանէին զայն իբր շատ լուսավոր, յառաջդիմութեամբ փափկափրտ և ազնիւ երիտասարդ: Աշխարհ անկէ շատ բան կը յուսար: Նա Կայսրութեան ստնձը ձեռքը առնելէն ետքը յուսախաբարութիւն միայն պատճա-

ռեց հանդիսանալով մին ամենաբարեւոր կայսրերէն: Ասիկէ երեք ամիսի չափ առաջ էր որ վարագուրը քիչ մը կը բացուէր և այս յուսախաբարութիւններու ներքին պատճառները երեւան կուգային, լուր ելաւ թէ Ձարին մայրը արքունիքին միւս անդամներուն հետ դաւադրութիւն մը կը սարգէ Ձարը գահընկէց ընելու, որովհետեւ առջինները ստակալի պահպանողական են ու վերջինս ազատական ձգտումներ ունի:

Հիմա որ այս խնդիրները վճռական կէտի մը հասած են, վարագուրը աւելի կը բացուի և կը տեսնենք թէ Ձարին արքունիքին մէջ գաղափարներու և ձգտումներու ինչ ահագին տարբերութիւններ կան, թէ ինչ ներքին ընդհարումներ տեղի ունեցած են անոնց մէջ երկրին վարչական խնդիրներու վերաբերմամբ:

Այս խնդիրը աւելի պարզաբանելու համար ակնարկ մը ձգեցք Աղէքսանդր Բ. Կայսեր օրերուն վրայ:

Ռուս Ոչնչականները իրենց գործութեան կատարը հասած էին: Ձարը զուրկ կորսնցուցած էր: Այդ ահաւոր սպառնալիքին առջև առնելու համար Աղէքսանդրը իւր աչքերը հանգչեցուց պետական մեծ մարդու մը, մեծ հանձարի մը, Լորիս Մելիքովին վրայ, գանձիկայ երկրին վարչութեան ղեկավար դարաւ, պետութեան սանձը անոր յանձնեց, գանձիկայ ղեկավար հռչակեց՝ հրովարտելով մը հրամայելով որ «ամեն ոք անպայման կերպով հնազանդի Լորիս Մելիքովի ամեն հրամաններուն»:

Լորիս Մելիքովի ծագած չարիքներուն արմատական դարման մը տալու միակ միջոցը նկատեց երկրին Սահմանադրութիւն մը տալը: Ռուսի սահմանադրութիւն մը պատրաստեց, զայն Կայսեր ներկայացուց և իւր ճարտար բացարձակութիւններով անոր ջերմ հաւանութեանը արժանացուց: Կայսրը որոշեց ստորագրել պատրաստուած սահմանադրութիւնը, և ահա երկրին կը բրական դատակարգը տեսնելով որ սահմանադրութեան մէկ մեծ հարուածը իր գլխին պիտի իջնէ, իրար անցաւ, Ս. Սինոդը արքունիքը գրգռեց սահմանադրութեան դէմ: անով արքունեաց «նուիրական իրաւասութիւններուն ստանկոյ ըլլալը մասնաւոր ընկելով, ստոր վրայ Ռուսիոյ արքունիքը մոլեգործ կատարութիւնով մը Ձարին դէմ զինուեցաւ. և Ձարը ստիպուեցաւ տեղի տալ: Սահմանադրութիւնը ջուրը ինկաւ և Լորիս Մելիքովի կը բրականութեան և արքունիքին վրէժխնդրութեանն ազատելու համար Փարիզ փախաւ:

Տեսանք թէ Ռուսիոյ պետական վարչութեան մէջ Ձարին զատ ուրիշ ի՞նչ ահագին ուժ մը կայ խաւարին ու բռնութեան գէնքերովը զինուած: Բարի տրամադրութիւններու տէր եղող Ձար մը մինակ կարող չէ ուզածը ընելու. նոյն բանն էր որ պատահեցաւ Ձինաստանի վերջին երկասարգ Կայսեր: Կայսրը տեսնելով որ խաւարտչին նախապաշարութիւններու եւ սպիտակութեան տակ իր երկրը կը փոխուէր քայքայուի, ուզեց արեւմտեան քաղաքակրթութիւնը պատուաւորել իր պետութեանը, այդ իմաստով ալ հրովարտակ մը հանեց. սակայն ի՞նչ եղաւ հետեւանքը:

Կայսեր խոր մայր Կայսրուհին իր գլուխը հաւաքեց երկրին բոլոր խաւարամիտ և բռնաւոր վարիչները. Կայսրը գահընկէց ըրաւ ու կայսրութեան սանձը իր ձեռքը առաւ:

Ահա հոս ալ տեսանք թէ Կայսրին վեր Կայսերական գերդաստանը կայ՝ որը երբ Կայսեր մէջ որ և է յա-

ռաջդիմական կամ բարի տրամադրութիւն տեսնէ՝ Պօս օձի նման կը փաթտուի անոր և անկէ դուրս կը հանէ բարի տրամադրութեանց վերջին շունչը:

Նոյն բաներն էին որ պատահեցան Նիքոլա Բ. ներկայ Ձարին, անոր գահակալութեանն ի վեր: Իր և կայսերական գերդաստանին մէջ պատահած բոլոր անցուդարձերուն մասնաւոր անտելութիւնները դեռ վարագուրի ետեւ են, ինչ որ վարագուրի ծայրերէն միայն կը տեսնենք՝ այն է, թէ երկասարգ կայսրը ազատասէր. յառաջդիմական ու բարի ձգտումներ ունեցեր է, որոնց դէմ երբ է արքունիքը՝ երկրին պահպանողական ու բռնասէր պետերովը բանակուած:

Գաղիոյ արտաքին գործոց նախարարը շատով Ս. Փեթրուպովի գնաց: Այս առաքելութեան թէ և շատ մեկնութիւններ տրուեցան, իսկ ամենէն ճիշդը այն կը նկատուի թէ անոր նպատակն է ջանալ համոզել Ձարը որ իր գահէն հրատարակու մը տադրութիւնն էր կենայ:

ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸ

Վերջին հետազոտման կերպի թէ թրանսփառի հանրապետութեան և Անգլիոյ միջև մտաւորապէս պատերազմ մը անխուսափելի է: Կ'ըսուի թէ Գաղիոյ արտաքին գործոց նախարարն Ձարին հետ տեսակցութեան միջոցին պիտի ջանայ Ռուսիոյ հետ համաձայնութեան մը հանգիւլ և որոշել թէ իբր դաշնակից Անգլիոյ դէմ ինչ զէրք բռնելու են երբ թրանսփառի վրայ պատերազմ մը սկսի:

ՄԻՈՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերջերս կրկին աշխարհի քաղաքականութեան մէջ մեծ իրար անցում մը կայ Միացեալ Նահանգաց Գորութեան և անոր աշխարհի քաղաքականութեանը մէջ մտնելուն վրայով:

Նիւ Եորք Հէրալդը քանի օր առաջ իր Սթոքհոլմի թղթակիցէն հետազոտման հրատարակեց, որով իբր թէ ծովակալ Տուր քսած էր թէ «մեր երկրորդ պատերազմը Գերմանիոյ հետ պիտի ըլլայ»: Որչափ որ ծովակալ Տուր անպաշտօն կերպով այդ լուրը հերքած է, սակայն կրկին թէ Միացեալ Նահանգաց և Գերմանիոյ միջև լարուած դրութիւն մը կայ և վերջինին լրագրիները շատ անհանգիստ են:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԸ

Մեր անցեալ թուով ծանուցինք խաղաղութեան համաժողովին վերջնալը:

Թէ ինչ եղաւ այս ժողովին բարոյական ազդեցութիւնը աշխարհի քաղաքականութեան վրայ՝ առ այժմ ոչ ոք կրնայ ըսել, սակայն յայտնի է թէ գործնական կարեւոր արդիւնքի մը չկրցան հասնիլ. ո՛չ որովհետեւ ներկայից տրամադրութիւնները նըպատաւոր չէին. այլ պետութիւններու հաստատուած շահերը իրարու այնքան անհամաձայն ու նոյն իսկ իւրաքանչիւր երկրի գաւազանները միմեանց այնքան հակասակ են՝ որ համաժողովներու բարի տրամադրութիւնները կարող չեն կրնար ըլլալ այս ներքին և արտաքին կռիւններու հիմնական պատճառներուն ընդդէմ խաղաղութեան հաստատուել: Գինովի մը դանդաղութիւնները չենք կրնար մեղադրել, անբանաւոր է անկէ պահանջել որ ուղիղ քալէ, մինչև որ անոր որովայնին մէջ լցուած ոգելից ըմպելիքը չսպառի:

Ասանկ ալ աշխարհի խաղաղութեան արշալոյսը պիտի ծագի այն

օրը, երբ ընդհանուր ընկերութեան անտեսական հարցը իր օրինաւոր լուծումը գտնէ, և երբ պետութիւններու բռնաւարական ձգտումները և անիրաւ շահերը ջնջուին:

Խաղաղութեան վեհաժողովը յաջողեցաւ միայն քանի մը պատերազմական համաժողովային օրէնքներ գծել և իրաւարար ժողովի մը կազմութիւնը ընդունել սակայն որոնց և ոչ մին ստորագրուեցաւ պետութեանց ներկայացուցիչներու ընդհանուրին կողմանէ: ուսանք այս ինչ ու ուսանք այն ինչ բանաձեւին տակ իրենց ստորագրութիւնները դրին:

Համաժողովի փակումէն անմիջապէս ետքը Գերմանիոյ մէկ պատուիրակը յայտարարեց թէ «երկրին իրաւունքները և պատուը պաշտպանելու մի միայն մէկ միջոց կայ, այն է լաւ սուր մը»:

Այո՛, սուրը պիտի տիրէ և սուրը պէտք է տիրէ, մինչև որ անիրաւ տիրապետութեանց ոգին և իրաւասութիւնները իրենց բոլոր ձեւերովը հալածուին ընկերութեան միջավայրէն: այս փրկուէս գործը պիտի կատարէ ընկերութիւնը ինք, սնանկութիւնը և զարգանալով զիտակցութեան պայծառ ճառագայթներուն տակ:

ՏԵԼԻՍՍՈՒԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Լոնտոն Տէլլի Մէլլին Ս. փեթրոս-պոլսի թղթակիցը յիշեալ թերթին հետեւեալը կը հեռագրէ, Գաղիոյ Արտաքին Գործոց Նախարարին առաքելութեանը մասին, որ այժմ՝ Ռուսիոյ մայրաքաղաքը կը գտնուի:

«Ստույգ պարբերէ կրիմանամ որ Տէլքասին Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարին հետ ունեցած տեսակցութեան միջոցին ջանացած է որ Ֆրանսո-Ռուսական Դաշնակցութեան կապերը ամրապնդեն, Ռուսիոյ դադարային քաղաքացիութիւնը Գաղիոյ հետ համաշահութեան հողի մը վերայ դրուելով, սակայն անյայտը կ'սած է:

Կոմս Մուրավիէֆը ջատագոված և նոյն իսկ թախանձած է Գերմանո-Ֆրանսական մերձեցման մը վերայ»:

ՉԻՆ ՈՒ ՃԱՓՈՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Նոյն թերթի Հոովմի թղթակիցը կը հեռագրէ թէ Իսալուկան կառավարութիւնը բացարձակ վստահութիւնով տեղեկացեր է թէ Չին ու Ճափոնական դաշնակցութիւն մը կ'ընդունուի:

ՈՒՐԻՇ ԴԱՇՆԱԿԻՑ ՉԵՆ ՈՒՉԵՐ

Ռուսիոյ թերթերը և ժողովուրդը սաստիկ բողոք կը բանան ուրիշ որ և է պետութեան մը Ռուսո-Ֆրանսական դաշնակցութեան միանալուն դէմ:

Փիլիպեան կղզիներուն մէջ զօրավար Մըրաթըր 4000 զօրքով յարձակեր է 6000 է բարկացած ապստամբ բանակի մը վրայ և զայն չարաչար պարտաւոր ի փախուստ մղած է, որոնք ետեւին շատ մը մեռելալիներ ու վերադարձան ձգած են:

Ուրալուտի փոքրիկ Հանրապետութեան Նախագահը սպաննուեցաւ եւ հիմա կառավարութեան եւ յեղափոխականներու մէջ քաղաքական պատերազմ կը մղուի:

Կրսուի թէ այս ժողովուրդը ամեն անգամ որ կառավարութեան մէջ զեղծում մը կը տեսնէ, իր բողոքը յեղափոխութիւնով կը յայտնէ: Ամենէն վերջին միջոցը ամենէն առաջ կը գործածեն:

ՏՐԵՑՅԻՏԻՆԻ ՆՆԴԻՐԸ

Գաղիա նորէն Տրէյֆիւզի խնդրով այժմով կ'ըսուի:

Տրէյֆիւզի կրկին դատուելուն երկրորդ զինուորական ատենը բացուեցաւ այս անցած երկուշաբթի օրը:

Առաջին հարցաքննութիւնը տեղի ունեցաւ հրապարակաւ: Կարգ մը Հարցեր ուղղուեցան և ամբաստանութիւններ ներկայացուեցան որոց Տրէյֆիւզի պատասխանեց կամ հերքեց շատ արագ կերպով, առանց մտաւարտ:

Այդ նիստին մէջ որոշուեցաւ քանի մը դռնփակ նիստեր ունենալ ուր պիտի քննուի Տրէյֆիւզի մեղադրող դատանի գործութիւն մը որուն մէջ օտար պետութիւններուն զիւրազգածութեան դպչող խնդիրներ կան: Անկէ ետք կրկին դռնփակ նիստեր տեղի պիտի ունենան:

Կը կարծուի թէ քանի մը օրէն զինուորական ատենը կարող պիտի ըլլայ իր վճիռը սալ:

Ի՞նչ պիտի ըլլայ այդ վճիռը: Ահա այն մութ կէտը, որուն վրայ կը տրուի ո՛չ միայն Գաղիոյ, այլ Հանուր Աշխարհի սիրտը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀՆԱՐԱՆՈՐԹԵԱՆՑ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Գիտութիւնը ընդունած է թէ երկիրս երբեմն կազային և երբեմն ալ հրեղէն վիճակ մը ունեցեր է: Այս վերջին շրջանին՝ երկրագունդս ամբողջ Հարած լավոր զանգուած մ'էր, որ կ'իջէր, կ'եռար ու փոթորկեալ ովկիանի մը պէս՝ լավայի հրեղէն ալիքներ կը բարձրացներ: Հիմալանա, Ալպեան, Արարատ ու բոլոր անհամար փոքր ու մեծ լեռներն անոր վերջին պայծառ ալիքներն են:

Պահ մը մեր երեւակայութիւններով երկրին այդ հրահալ ու հրածուփ վիճակը շատ մօտէն շրջապատենք, անոր հանդիսատես ըլլանք և մենք մեզի կարգ մը «Միթէ Հնարաւոր է» ներ հարցունենք: Հարցունենք— Միթէ Հնարաւոր է որ այդ կրակի ծովէն օր մը կ'անցնէ դուրս գայ: Հնարաւոր է որ անկէ մտնուէն էակներ ծնին: Հնարաւոր է որ այդ եռացող լավայի ալիքները յաւիտենական լեռներ ըլլան, կանգնին և անոնց կողքին պաղ ու վճիռ ջուրի առուներ հոսին: Հնարաւոր է որ այդ հրածուփ մակերևոյթներուն վերայ կանանց մարգագետիններ տարածուին: Հնարաւոր է որ կրակէ բլուրները ծաղկին. այդ կայծի գէգերու ծոցը՝ վարդը, մեխակը, գինարբը, մանուշակը, շուշանը փթթին՝ ամենուն ալ կ'ընքերը առաւօտեան ցօղին մարգրիտներով զարդարուած: Հնարաւոր է որ այդ հրարորոք Հնոցները բուրաստաններ արտադրեն: Հնարաւոր է որ այդ Տիեզերքը լեցունող հրաշունչ փոթորկիները իրիկուսան զով զեփիւռին վերածուին: Հնարաւոր է որ այդ հրաստանի անհունէն ելլեն զբախտաւէտ անտառներ և պարտէզներ: Հնարաւոր է որ այդ կրակի, բոցի և լավայի յեղաշրջումներուն մէջէն մարդ էակը ծնան և իր սիրուհիին հետ գրկախառնուած ինքզինք գտնեն սարսիթազեղ և ծաղկալից ծառերու հովանիին տակ և ծաղկապսոյճ գորգերու վրայ: Հոս ստիակը վարդի թփին վրայ իր սիրեցեղ գեղգեղէ, հոն մտակը քաղաքային կարկաչներով ծառերու վար կ'ախրուած ճիւղերը, խոտերուն թուփերը և ծաղկիներուն երփնագեղ թերթիկները Համբուրնով սահի. աստիկն քարայրը

իւր խոր ծոցէն հոսած պաղ աղբիւրներուն հետ զովութիւն մը տարածէ, անդին գառնուկներ և ուլեր իրենց մայրերու շուրջը մայելով ցաթկուսեն ցնծալից. զեփուռը ծաղկանց անուշ բուրմունքներով պարարուն՝ իբր սիրոյ բուռն գրկախառնումի զոյգ մը նուազկատ շունչէն ծնած՝ Հորս դին սիրոյ արբեցութիւն մը տարածէ:

Հնարաւոր են այս ամենը հրոյ և լավայի աշխարհէն:

Ներկայ աշխարհը այդ բոլոր հարցերուն դրական պատասխանն է: Այո՛:

Եւ տակաւին ի՞նչ անիմանալի, անհասանելի և անմարտնելի հնարաւորութիւններ կան՝ որոնք տակաւ յայտնուեցան, որոնք տակաւ պիտի յայտնուին և որոնք յաւիտեան անյայտ պիտի մնան:

Քարայրներու մէջ վայրի պտուղներով տարող մարդերու պնդումն համար ի՞նչ հնարաւորութիւններ կային: Հնարաւոր էր որ կապիկներու ցեղին յաջորդէին Բարբիտցի, Եգիպտացի, Հռովմայցի և Աթենացի քաղաքացիները: Իր քարէ գործիչներուն վրայ հիացող անտառանակին համար Բրուփի գործարան մը, բընակութեան համար քարայր մը գտած ըլլալուն վրայ ինչպատասա եղող վայրենիին համար՝ պալատներու և տաճարներու կառուցումը և իր նետին ու աղեղին վրայ սիրացող բարբարոսին համար այս օրուան թնդանօղները Հնարաւոր էին:

Պահ մը երթանք մարդուն ամենամարտնական օրերուն և այն աւուր լուսովը հարցունենք թէ արդեօք շոգենաւ, Հոգեկառք, օդանավ, մամուլ, հեռագիր, հեռաձայն, ձայնագիր, հեռադիտակ, խոշորացոյց, Բոթիկենի ճառագայթներ, ելեքտրոնայ, անթել հեռագիր, վերջապէս ներկայ բոլոր Հնարքները, գիւտերը և մեքենագործութեան ամեն տեսակները Հնարաւոր էին արդեօք:

Ի՞նչ կը խորհնք այն Հնարաւորութեան վրայ որ ոսպնած և պակիին իր մէջէն անցնող ճառագայթներովը պիտի վառէ թշնամիին նաւերը և դիպաստ գետին փոէ ահագին բանակները: Մեր այսքան Հնարաւորութիւններու փորձառու եղող միտքը ի՞նչ կը խորհի այն Հնարաւորութեանց անհուն ամբարին վրայ որ բնութիւնը իր ծոցին մէջ պահուած ունի դեռ:

Բնութեան մէջ այս անիմանալի հնարաւորութեանց հրաշալի իրականացումներու քննութեանէն կուգանք սա եզրակացութեան թէ՛ տիեզերքին մէջ ամենակարողութեան անհունութիւն մը կայ, թէ՛ ամեն բան Հնարաւոր է: Արդ այս եզրակացութեանէն հետեւեալ հարցերը կը ծագին.— Ո՞վ կամ ի՞նչ է այս ամենակարողութեանց աղբիւրը և ի՞նչ պիտի ըլլանք մենք գերեզմանէն անդին:

Հոս է որ մարդկային միտքը աշխարհի հրարորոք լավաէն մինչև ներկայ յուսովի, բեղուն և կենսալից երկրը, մինչև արուեստի, գիւտի և գիտութեանց կատարները ունեցած սողսկուսներէն և մագլցումներէն թռիչ կ'առնէ, կը սպանայ վեր ու վեր, իր ստացած Հնարաւորութեան գիտակցութիւնովը կը հասնի գիտակցութեան և կարողութեան անհունէակին, կը փարի անոր և մանական թոթովումներով զայն «Աստուած» կը կոչէ: Հոս է որ մարդը իր էութեանը, իր մտքին, իր հսգիւնի, իր գիտակցութեանը ծնունդ տուող անհնարութեանց անցեալին նայելով՝ անձին խորբնէն ձայն մը կը լսէ, «ես չեմ կրնար մեռնիլ, ես պիտի սպիրիմ, ինձի համար Հանդերձեալ

կանք կայ, մահը չ'ըջափոխութիւն մ'է, անով կ'անքի նոր և աւելի բարձր և աւելի նպաստաւոր շրջանի մը պիտի անցնիմ, գերեզմանէն անդին կ'անքիմ շարունակութեան Հնարաւորութիւնը կայ»:

Անցեալի անհնարութեանց Հնարաւոր գառնալէն ծագած է անհնարութեանց պապազայ Հնարաւորութիւններու հաւատքը: Գիտական մտքին համար անհնարին բան չկայ. կրօնական հաւատքը Հնարաւորութեանց գիտակցութիւնն է:

Ուրիշ առթի կը թողուք բացատրել թէ Հանդերձեալ կ'անքի մը գաղափարը ի՞նչ ազդեցութիւն կուտենայ ներկայ կ'անքին վրայ:

Գ. Պ. Չիթճեան

Ա Չ Դ

42րդ փողոցի Ս. Բարթողովմէսս եկեղեցոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան Կաճառը անդափոխուած և աւելի հաստատ հիմքեր վրայ վերակազմուած ըլլալով՝ իր մարդու թիւները կը շարունակէ ի թիւ 498 Յրգ Ա. քիւլ 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8էն 10ը:

Ս. Չ Դ

Հ. Ե. Թանգարանի Միութեան 10րդ Տարեգարծի Գաշտ. Հանդէս Միութիւնս իւր 10րդ տարեգարծի դաշտային Հանդէսը պիտի կատարէ Օգոստ. 13ին ի Շէֆֆըրս Փառք, Ռէյսթ Հոպօքըն Ն. Ճ: Հանդէսը պիտի սկսի առաւօտեան ժամը 9ին, յորում տեղի ունենայի մամէն խաղեր և ուսելիքներ զուտ Հայկական պիտիւլան: Ամեն ջանք ի գործ դրուած է խաղերը անվնաս և զուարճակալ ընելու և ուսելիքները ատան ծախելու, երկսեռ ազգայինք սիրով կը հրահրուին մեր օրտին մօտ եղող սոյն Հանդէսը վայելիլու համար: Միութեանս բոլոր անդամները այս ազգը իբր մասնաւոր հրաւէրը ընդունելով թող հանին անպատճառ ներկայ գտնուիլ, ուր տեղի պիտի ունենայ նաեւ ընդհանուր անդամական ժողով, պիտի ատենախօսուի Տ. Սարկաւազեան: Մտից գիւր 10ը ոչնիթ է, տոմսակ կը վաճառուի ամեն Հայ ճաշարաններու մէջ և Թանգարանը 145 խթ 23րդ փողոց: Հոպօքընի կամ Ռուսարժրաի կառքերը ուղղակի պարտիքին առջեւ կերթան, և փառուցէք գօնարք թերին, Շէֆֆըրս Փառք: ԽՆԱՄԱԿԱՆ ՌԻՍԻՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ԽԱՐԲՈՒԹԻՒՆ

M. Harpoottlian, P. O. Box 470, Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը՝ իր ձեռամբ դրամ զրկողներէն գնահատելի կերպով քաշալերեալ պարտք կը սեպէ յայտարարել թէ մենք ևս պէտք եղած զոհողութիւնը չենք զըլլացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովուրդեան և մասնաւորապէս մեր տան անձնօթներուն իրական վստահութիւն տալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐԲՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂԱՄԱՐԻՆ ԽԱՐԲՈՒԹԻՒՆ տան՝ երկրին մէջ ունեցած առաւել քան 10,000 Օսմ. ոսկւոյ անշարժ ստացուածքը իր սոյն փոխադրի գործոյն երաշխաւորութիւնն է, յայտ անոնց որոնք կուգեն դրամին վստահելի միջոցով զրկել: Ուստի կը յուսանք թէ Հայ Հասարակութիւնը չպիտի վարանի իրեն ապահովագոյն միջոցը՝ մեր ձեռամբ զրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակագիր տալ Սարբերդի, Տիգրանակերտի, Բղիթի, Բալուի, Բերրիի, Մալաթիայի, Սեւաղի, Կ.Պոլսի, Նաև Տաճ, բոլոր քաղաքաց համար: (Ինձ դրամ զրկողներն ապահովագրութեան համար՝ Նէշընըլ Պանքի չէք և կամ մընի օրտըր զրկելու են):

Հայրենիքի մէջ ո՛ր է գործ տեսնեալու կամ գործադրման օգնելու հասմար՝ պատրաստ եմ եղորս Յարութիւն էֆի. ձեռամբ կատարել տալ: Հեռադրով և նամակով դրամ մը կամ նաւային թիքէթներ կրնամ զըրկել Մարտիլեայ:

Անցեալները ի նիւ Եօրք 29րդ փողոցի 307 թուոյն մէջ սուսիկ փուսիկ պատկազրութիւն մը կատարուեցաւ, փետացան էր Պ. Առաքել Պէրճեան բնիկ Սերաստացի և հարսնացուէն էր Օր. Ազնիւ Պէրճեան Այնթապցի: Թէպէտ և Հայաստանեայց Եկեղեցւոյ կղերն էր պատկազրուող, սակայն ամեն տարօրինակութիւն ունէր: Օրիորդը հազիւ երեք ժամ առաջ նաւէն ելած էր, բարեկամներ գնացած էին բարի գալուստ մաշթիւնու և ահա գարմացմամբ հարսանիքին հանդիպեցան: Հալաւ չը կար: «Այսօր երկնայինքը» ժանգոտած շըլթայի կտորի մը վրայ երգեցին: Ամեն բան շտապով անցաւ, կարծես լոկ ձեռականութիւն մըն էր, որ տեղի կուենար և հայը իր կրօնական այլատեսութիւնը նշանը ցոյց կուտար նաև իր գէպի եկեղեցին և անոր խորհուրդներն ունեցած յարգանքին բացակայութեանը մէջ: Վարդապետն ալ «ձրի առիթ եւ ձրի տուէք» ի ըսկողութեամբ նարօտն էր կապած: ԿԻՒԻՆՑԻ

Վարդապետի տունին առթիւ Չըլթայի փողոցի հայ գաղութն բարեբաղդութիւն ունեցաւ անցեալ կիրակի Հայկական Ս. Պատարագ անսենյու և ընդհ. Առաջնորդ Սարաճեան Սրբազանի քարոզչի մտիկ ընկելու: Արարողութեան պահուն ժողովորդն ամենէն աւելի հետաքրքրուող և վրիժառու գոհունակութեամբ հըրահարող պարագան եղաւ պատարագի Առաջ. Սրբազանի «ոչ-յիշատակեմքը»: Սրբազանը յիշատակութեան պահուն Օրմանեանի անունը լռելիան անցաւ, որով ըրար ժողովրդի դիմագծերն փայլատակեցին հագեկան մոլորիկ խնդուսով:

Արարողութեան վերջ սկսաւ քարոզչ: Սրբազանը անխնայ հարուստով մարակեց Ամերիկացեան հայ գաղութի անտարբեր, անազգասէր, անհարկեանսէր և անքրիտոնէական լինելով, յարեց թէ՛ մեր բոլոր գործունէութեան մէջ միշտ կեղծիք խառնած ենք: Մեր գործելու մղիչ շարժառիթն եղած է ցուցամտութիւն և կամ անձնական շահագրիտում: Ենելով այն վարդապետութեան վրայ թէ՛ առանց իրապէս ճշմարտութիւնն ճանչնալու փրկութիւն չկայ, յորդորեց Հայերս գործել իր ճշմարտ ազգասէր, ճշմարտ հայրենասէր և ճշմարտ քրիստոնէայ:

Օգոստ. 7, Չիք Կ. Գ. Պ.

Պ. Տիգրան Պոյաճեան Լորէնսէն կը գրէ:— Այս շաբաթ Տիգրանի մէջ տեսայ կարմրցի Կ. Ժամկոչեանի գործած դաւաճանութեան մասին ձեր գրածը, և կը յանձնարարէիք տեղոյս Յեզ. մարմիններուն որ ինքիքը քննելով ստուգութիւնը ձեզ իմացուեն: Ես առանց պաշտօնական ձեռնարկութեան նայելու՝ այդ խնդրին հետեցայ և տեսայ թէ այդ Կ. Ժամկոչեանը իրեն մասին ըստածը չուրանար և կը յաւելու թէ «կրկին պիտի ընեմ»:

Այս բանին պատճառը այն է եղեր որ, իր այդ հօրեղբոր որդին իր (Կ. Ժամկոչեանի) տունն կը նստի, հողն կը վարէ և իրեն դրամ չվճարեր: Ուստի աս ալ իր վրէժն անկէ լուծելու համար անոր անունին ատանկ յեզգոփոխական գրութիւններ կը ղրկէ:

Պ. Հայկ Յովսէփեան կը գրէ Նորթ Ատամ Մէսէն— եթէ մեատաքս կամ մեր երկրին հասարակ կուսն գործել գիտցող էրիկ մարդ:

կամ կրնէր կան, կրնան այդ քաղաքին մէջ գոհացուցիչ գործ ստանալ, ուր 30ի չափ այդ կարգի գործաւորներ կուզուին հիմա:

ԳՂԻ, ԹէՄՐԱՆ ԳԻՒՂ
Պոսթօնէն Վ. Ն. Մ. կը գրէ— Յունիս 20ին գիշերն, ժամն 3ին, Բիւրտերն մտած են Թէմրանի երեւելիներէն Մարտիկ աղա Սարգիսեանին տունն և զայն ոչխարի պէս մորթեր են:

Պրն. Արամ Գոնջակիւնեան խմբաբարութեանս ուղղած նամակով մը՝ ի պատասխան պրն. Գալճեանի նամակին, կըսէ թէ ինք Պարճ Օֆիսին մէջ կը կենար իբր թարգման երկաթուղիի ընկերութեան մը կողմէն, հոն կառավարութեան իր առած ծառայութիւնը կամաւոր եղեր է, թէ պարճ Օֆիսի պորտէն կախուլ է այս այն անձին դուրս ելլելը կամ ետ ղըրկուիլը. և ոչ թէ գրասէն ելող անհատներէ, և թէ մէկ տարուան մէջ ետ ղըրկուած հայերուն թիւը միայն վեց է որ բաղդատելով ուրիշ ազգերու ետ ղըրկուածներուն, որոնք անհամեմատ զօրաւոր պաշտպաններ ունին հոս, շատ քիչ է:

Ն. Պ. Ռ. Ս. Վ. Ա. Ճ. Ա. Ռ.
Ս, Տամպուրաճեան
509 2րդ Ալիւն. 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արեւելեան և արեւմտեան ումէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և առօրեայ թարմ միս:

Ուստի պատուական պըրլուրը և ծեծածը փաւընը 3 սէնթ, 25 փաւընը կամ աւելի գնողներուն համար 2 1/2 սէնթի, Հայկական պանիրին փաւընը 12, իսկ մեծաքանակ գնողին համար 10 սէնթի, ձիթապաղիին փաւընը 10 շատ գնողներուն համար 9 սէնթի, ձիթապաղի պատուական իւզին կ'ընէր \$1.40 ի կը ծախենք:

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրեւ վերի հասցէին:

The Equitable Life Ins. Society of the U. S
«Էքիւթէյլ»

Աշխարհի հզօրագոյն և լուսագոյն կենաց Ապահովագրական Ընկերութիւնը:

Ամեն հասակի և վիճակի տէր անձանց համար ապահովագրեր կը տայ, ի դէպս մահու կամ 15—20—25 տարիէն վճարելի՛ ղիթէ ուզուի:

Օտար երկիրներէ կամ ներսի նահանգներէ փոփոքող կրնան դիւրաւ թղթակցութեամբ ինքզինքնին ապահովագրել տալ:

Հրէքեհի դէմ ևս կապահովագրեմ:

(Գործակալ)
ԿՐԱԿԵՏ ՊԻՒՐԻՆԻՆՃԻԿ
154 E. 27th St. New York

ՃԱՇԱՐԱՆ
805 Մէյն փողոց Փաթրոնը

Պատիւ ունինք ծանուցանելու թէ սասունէն առնուած ճաշարանը նախանձելի գրեթէ մը մէջ գրուելու համար ամէն կարելի միջոց պիտի գործածենք, անանկ որ մեր յաճատորները գոհ ըլլան. մեր խոհարարին երկար ամեայ փորձառութիւնը ինքնին երաշխաւորութեան թէ կերակուրները համեղ և մաքուր պիտի ըլլան: Գործ մը միայն ձեզ գոհ պիտի ընէ:

Թ, Ա, ԱՆՏՈՆԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍՄԻ
Պ. Ս. Կ. Ե. Ր. Ն. Ե. Ր.
(Մեր կեանքէն)
Գրեց
Վ. ՇԱՀԷՆԻ
Գիրն 15 սէնթ: Բսան օրինակ գնողին մի օրինակ նուէր կը տրուի: Գիրմել հեղինակին:
V. Schaheni
660 P. O. Box,
Central Falls R. I.

ՆՈՐ ԿԱԵՆՔ
ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՎԱԿԱՆ

Ամէն անոնք, որ կուզեն ազգային հին ու նոր կեանքին և յեղափոխական անցեալ ու ներկայ ուղղութիւններուն տեղեակ ըլլալ, անոնք որ կուզեն հայկական գեղեցկագոյն գրիչներէն արտադրուած հմտալից գրութիւններ և շահեկան երգիծարանութիւններ կարգաւ՝ ՆՈՐ ԿԱԵՆՔ կարգաւ են:

Տարեկան բաժանորդագրին է 2 տոլար. վեցամսեայ՝ 1 տոլար:

Նոր կեանքի նիւ Եօրքի գործակալն է Պրն. Անտօն Թագուորեան և հասցէն՝

343 Իսթ 34րդ Փողոց:
Նոր կեանքի բաժանորդներուն «Մարտ» ձրի կը ղըրկուի.
Պմբագրութեան հասցէն է,
L. FRANK
32 CHESTERTON ROAD
LONDON W. ENGLAND

ՊԼՂՈՒՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ


Այս նոր ընկերութիւնը կ'արտադրէ շատ լաւ և աժան պլոլուր և ծեծած: Մեծաքանակ գնողաց համար գրին է 2 1/2 սէնթ փաւընը:
Մանրամասն տեղեկութիւն ուզողներին պէտք է դիմեն հետեւեալ հասցէին:

NEW YORK
BULGOOR MANUFACTURING CO.
226 TO 232 Clinton St. Hoboken n. J.

Մերոպ Կաղանճեան

231 Իսթ 28րդ փողոց նպարավաճառի խանութիս մէջ կը ծախուի ի միջի այլոց իւրաքանչիւր փաւընան շամիչ 5սթ., սալոր 5, մաքարոնի 5, դեղին թել շէհրիէ 8, զէյթին 10, օթմիլ 2 սէնթի, սալսի 5 փաւընը 27 և 1 փաւընը 8 սէնթի և քէնով սոմաթէյը 7 սէնթի, պատուական ապրանք կը պահեմ, աժան կը ծախեմ, մեծ քանակութիւնով գնողներուն կարեւոր զեղջ կընեն:

Պատիւ թիւս մէջ գործելու պատանի մը կուզեմ, ամսական 6 տոլար և ապրուստը տալու պայմանաւ. պէտք է հաւատարիմ ըլլայ և վկայական ունենայ:




Պերլինի համալսարանէն վկայեալ՝ Տքթր. Էֆիլ պատրաստ է ամենաթուրք մասնաւորապէս գաղտնի կոչուած արտերու ծեծելու:

Կատարելապէս չը բուժուող հիւանդին դրամը ետ կը տրուի: Շատ մը հայեր մեծ գոհացում գտեր են իրմէ: Հայոց համար վճարները շատ չափաւոր են: Օֆիսը 503 5րդ. Ալքընի 52րդ. փողոցի անկիւնն է: Առաւօտեան ժամը 9էն իրկուան 5ը, իսկ կիրակիները՝ 9էն 12 օֆիսը կը գտնուի: 4—12

ԱԶԴ
Պուրկուրի միացեալ ընկերութիւն

Նոր չենք. տարիներէ ի վեր է որ մեր գործարանին մէջ կը պատրաստենք ամենա ընտիր ցորենէ պուրկուր որ քար չունի. գէշ հօտ չունի և մեր հայրենիքի պուրկուրին համը կուտայ որը թէ տանակներու և թէ ճաշարանապետներու գոհունակութեան արժանացած է: մեր պուրկուրէն գոհ չ'մնարողին դրամը ետ տալու սիրալոյսով ենք:

Մեր գնեցը խիստ չափաւոր են: կը ծախենք տաճկական ումէն կարգի ապրանքներ ևս:
Գիրմել:
Burgul Mfg. Co.
151 Union St., Worcester, Mas



Դ Ե Ր Զ Ա Կ
ՅԱԿՈՒ ՈՒՉՈՒՆԵԱՆ
159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աժան հանդերձ կը փնտռէք, անանկ չէ՞. — մենք սուղ կը շինենք — բայց չէ. մեր գործին որքա՛ն աժան ըլլալը ատեն մը գործածուելէն ետք միայն կրնաք հասկնալ. անոնք որ իրենց դրամը անարժէք ապրանքի տուած ըլլալու զղջումը չեն ուզեր ունենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզ հանդիպելու համար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ Հարիւրին քառասուն աժան պատրաստի հանդերձ ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարգուկենք:

Գիտնալու համար թէ, մենք մեր հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կառնենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ:

Լ Ո Ւ Ս Ս. Ն Կ Ա Ր Ի Չ
ՏԻԳՐԱՆ Ճ. ՄԵԼԻՐՈՆԵԱՆ
Elite photo Studio
182 Main Street, Paterson, N. J.

Պատիւ ունիմ ծանուցանելու Հայ Հասարակութեան թէ յաջողած եմ ճոխ և առաջնակարգ լուսանկարչատուն մը հաստատել Փէթրաքի մէջ ուր կը հրաւիրեմ հայրենակիցներս իրենց լուսանկարները հանել տալու, խիստ չափաւոր գնեցով: Երկուր տարիներու փորձառութիւն ունիմ արհեստներու բարձր երազներով. պատկեր մեծ ցուենլ, ընդօրինակել, շրջանակ շինել և այլն:

Նիւ Եօրքէն ու Նիւ Ճրզիէն եկողներուն ծամբու տոմսերու գրինք ես կը վճարեմ:

Կը յուսամ թէ շատ հայրենակցներ թէ չափաւոր գնով խիստ գոհացուցիչ լուսանկարներ ունենալու թէ ամառային զուարճալի ճամբորդութիւն մը ընելու և թէ մեղ քաջալերելու համար պիտի դիմեն մեզ:

Քոյս կը ծախուին Հայրիկի, Իգմիրեանի և Մայր Հայաստանի լուսանկարները:
Մանրամասնութեանց համար դիմել ինձ նամակաւ կամ անձամբ: